



ԳԱԶԱՀԱՇՎԻՉԻ ՍՏՈՒԳԱԶԱԾՈՒՄ

ՀՀ-ում բնակչության կողմից սպառվող կենցաղային գազի հաշվառումն իրականացվում է սլովակյան, ֆրանսիական և ռուսական արտադրության գազահաշվիչներով:

Չափագիտության ազգային մարմնի կողմից ընդունված կարգի համաձայն, կենցաղային հաշվիչների պարբերական ստուգաչափումը պետք է կատարվի 5 տարին մեկ:

Հաշվի առնելով, որ կենցաղային գազահաշվիչները հանդիսանում են մատակարարի՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի սեփականությունը, դրանց պլանային ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հաշվին:

Ըստ Գազի մատակարարման և օգտագործման կանոնների, մատակարարն առնվազն մեկ աշխատանքային օր առաջ բնակչին տեղեկացնում է ստուգաչափման տարվող գազահաշվիչի ապամոնտաժման մասին, որից հետո բնակչի ներկայությամբ հաշվիչը հանվում և փոխարինվում է այլ հաշվիչով՝ ապահովելով գազամատակարարման նորմալ ընթացքը:

Կատարված գործողության վերաբերյալ կազմվում է հանման երկկողմ ակտ՝ տեղեկություններ նշելով հաշվիչի ամբողջականության մասին:

Գազահաշվիչին միտումնավոր միջամտությունների հայտնաբերման դեպքում նրանց վերանորոգման հետ կապված ծախսերը կատարում է մեղավոր կողմը:

Գազահաշվիչները կարող են ենթարկվել նաև արտապլանային ստուգաչափման, եթե մատակարարի և բաժանորդի մոտ առաջանում է կասկածներ հաշվիչի աշխատանքի վերաբերյալ:

Այս դեպքում ծախսերը կատարվում է համաձայն ԳՄՕԿ-ի 4.10 կետի:

Գազահաշվիչների նախնական և վերջնական ստուգաչափմանը հնարավորություն ունի մասնակցելու նաև բնակիչը, եթե հանման ակտում կատարված է համապատասխան նշում: